ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
09 ՄԱՐՏԻ 2022թվականի N 13-Ն

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 02 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով, համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2022 թվականի մարտի 9-ի ավագանու թիվ 02 հերթական նիստի օրակարգը հետևյալ բովանդակությամբ՝

1/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2021 թվականի տարեկան բյուջեի և տարեկան աշխատանքային պլանի կատարման մասին,

2/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքում սուբվենցիոն ծրագրի շրջանակներում Նորաշեն, Գեղադիր, Հնաբերդ, Գեղաձոր և Բերքառատ բնակավայրերի գազաֆիկացման աշխատանքների իրականացման նպատակով համայնքի կողմից հատկացվող ֆինանսավորման գումար հատկացնելու մասին

3/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքապետարանի վարչական շենքի տանիքի հրդեհակայուն նյութերով մշակման համար գումար հատկացնելու մասին

4/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի հարակից տարածքում ֆոտովոլտային կայաններ տեղադրելու նպատակով հողամաս հատկացնելու մասին

5/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
09 ՄԱՐՏԻ 2022թվականի N 14-Ն

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով. *համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի 2021թ. բյուջեի կատարման հաշվետվությունը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի 2021թ. տարեկան աշխատանքային պլանի կատարման հաշվետվությունը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Համայնքի ղեկավար պարոն Ն. Հակոբյանին՝
ա) ակտիվացնել աշխատանքները՝ հողի և գույքի հարկերի բազաների ճշգրտման, տեղական հարկերի, տուրքերի և վարձավճարների հավաքագրման ուղղությամբ:
բ) հետևողական աշխատանքներ ծավալել և վարչական միջոցներ ձեռնարկել տեղական հարկերի, տուրքերի և վարձավճարների վճարումից խուսափողների նկատմամբ, նվազագույնի հասցնել ապառքները: Այդ աշխատանքներում ապահովել անհրաժեշտ հրապարակայնություն ու թափանցիկություն:
գ) անհրաժեշտ քայլեր ձեռնարկել համայնքի ֆոնդային բյուջեի կատարման ուղղությամբ: Ապահովել համայնքի զարգացման և տարեկան աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների ամբողջական իրականացումը:
դ) բարձրացնել աշխատակազմի և բնակավայրերի վարչական ղեկավարների պատասխանատվությունը՝ համայնքի 2022թ. բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման պլանի կատարման, բյուջետային միջոցների արդյունավետ և նպատակային ծախսման ուղղությամբ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
09 ՄԱՐՏԻ 2022թվականի N 15-Ն

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՇԵՆ, ԳԵՂԱԴԻՐ, ՀՆԱԲԵՐԴ, ԲԵՐՔԱՌԱՏ ԵՎ ԳԵՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԱԶԱՖԻԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնկառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 89-րդ հոդվածի 4-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով սուբվենցիոն ծրագրի շրջանակներում գազաֆիկացման աշխատանքների իրականացման համար համայնքի համաֆինանսավորման վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությունը, *համայնքի ավագանին որոշում է՝*

Գազաֆիկացման աշխատանքների իրականացման համար համայնքի բյուջեից , որպես համայնքի կողմից համաֆինանսավորման գումար, հատկացնել 167 728 032 /մեկ հարյուր վաթսունյոթ միլիոն յոթ հարյուր քսանութ հազար երեսուներկու/ ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
09 ՄԱՐՏԻ 2022թվականի N 16-Ն

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՀՐԴԵՀԱԿԱՅՈՒՆ ՆՅՈՒԹԵՐՈՎ ՄՇԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջով, համայնքի ավագանին որոշում է՝

ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքապետարանի վարչական շենքի տանիքի հրդեհակայուն նյութերով մշակման համար համայնքի բյուջեից հատկացնել մինչև 990.000 ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Տ/Պ ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
09 ՄԱՐՏԻ 2022թվականի N 17-Ն

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով համայնքային սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու մասին Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է՝

ՀՀ Կառավարության, «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և Ծաղկահովիտ համայնքի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում Ծաղկահովիտ,Գեղադիր,Գեղարոտ և Վարդաբլուր բնակավայրերում արևային ֆոտովոլտային կայանների տեղադրման նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող,հիշյալ բնակավայրերի վարչական շենքերի և մշակույթի տների սպասարկման տարածքներից հատկացնել հողատարածքներ հետևյալ չափերով.

1/ Ծաղկահովիտի մշակույթի տան / վկայական՝ 1955398, կադաստրային ծածկագիրը՝ 02-053-033-004, հողամասի մակերեսը՝ 0,0736 հա / սպասարկման տարածքից հատկացնել՝ 20քմ

2/ Գեղադիր բնակավայրի վարչական շենքի / վկայական՝ 12032018-02-0030, կադաստրային ծածկագիրը՝ 02-030-0011-0003, հողամասի մակերեսը՝ 0,0769 հա / սպասարկման տարածքից հատկացնել 20 քմ,

3/ Գեղարոտ բնակավայրի վարչական շենքի / վկայական՝ 12122018-02-0035, կադաստրային ծածկագիրը՝ 02-032-0027-0007, հողամասի մակերեսը՝ 0,12152 հա / սպասարկման տարածքից հատկացնել 12 քմ,

4/ Վարդաբլուրի մշակույթի տան / վկայական՝ 2371908, կադաստրային ծածկագիրը՝ 02-100-0006-0019, հողամասի մակերեսը՝ 0,1546 հա / սպասարկման տարածքից հատկացնել՝ 24քմ

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Ծաղկահովիտ, (093)392611 (077)251471, tsaghkahovit.hamaynq@inbox.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
09 ՄԱՐՏԻ 2022թվականի N 18-Ն

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, 90-րդ հոդվածի 4-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի, «Նորմատիվային իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով, *համայնքի ավագանին որոշում է՝*

Հավանություն տալ Ծաղկահովիտ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն և վերաբաշխում կատարելու համայնքի ղեկավարի առաջարկությանը հետևյալ բովանդակությամբ՝

- «1. Հաստատել Ծաղկահովիտ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեն՝
ա) 2022 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի եկամուտների գծով՝ 414 311 200 (չորս հարյուր տասնչորս միլիոն երեք հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ,

բ) 2022 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի ծախսերի գծով՝ 418 362 470,9 (չորս հարյուր տասնութ միլիոն երեք հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր յոթանասուն դրամ իննսուն լումա) ՀՀ դրամ,

գ) 2022 թվականի տարեկան բյուջեի ֆոնդային մասի եկամուտների և ծախսերի գծով՝ 131 388 164,1 (մեկ հարյուր երեսունմեկ միլիոն երեք հարյուր ութսունութ հազար մեկ հարյուր վաթսունչորս դրամ տաս լումա) ՀՀ դրամ,
դ) 2022 թվականի տարեկան բյուջեի ընդհանուր ծախսերի գծով՝ 478 750 635 (չորս հարյուր յոթանասունութ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար վեց հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ» բովանդակությունը շարադրել հետևյալ կերպ՝

- «1. Հաստատել Ծաղկահովիտ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեն՝
ա) 2022 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի եկամուտների գծով՝ 477 311 200 (չորս հարյուր յոթանասունյոթ միլիոն երեք հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ,

բ) 2022 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի ծախսերի գծով՝ 481 362 470,9 (չորս հարյուր ութսունմեկ միլիոն երեք հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր յոթանասուն դրամ իններորդ լումա) ՀՀ դրամ,

գ) 2022 թվականի տարեկան բյուջեի ֆոնդային մասի եկամուտների գծով 161 360 000 /մեկ հարյուր վաթսունմեկ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ և ծախսերի գծով՝ 194 388 164,1 (մեկ հարյուր իններորդչորս միլիոն երեք հարյուր ութսունութ հազար մեկ հարյուր վաթսունչորս դրամ տասներորդ լումա) ՀՀ դրամ,
դ) 2022 թվականի տարեկան բյուջեի ընդհանուր ծախսերի գծով՝ 541 750 635 (հինգ հարյուր քառասունմեկ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար վեց հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ»:

Կողմ -8 Դեմ -0 Զեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ԳԱՐԵԳԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԱՄ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻՇԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԵՎԱԿ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՎԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պ/Ղ՝ ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ